Ա.Ռ. Ա.Զ.Ն.Ո.Ա.Խ.Ո.Հ. ՍԱՏԱՐԻԶՍ

ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԻՍ

Թագ պարծանաց և վայելուչ պսակ փառաց հիւսեալ կապեցիք 'ի վսեմախոհ գլուխս ձեր, Ո՛ աղնուաշուք և բարետոհմիկ Տեարք, Վսեմ. Աբրահամ Պէյ Բարթողեան, և Վսեմ. Պօղոս Պէյ Անշըգեան, երկոքին տոհմակից և բարենշան սիրելիք, ոչ 'ի գեղանշոյլ մարգարտաց՝ ոչ 'ի փայլուն քարանց և յականց պատուական, որք դիւրեղծանելիք են և զանցաւորիս միայն ունին զվայելչութիւն. այլ յուսով անմահ Թագաւորին՝ անեղծին և մշանջենաւորին ակնկալեալ, սիրով և խնդութեամբ զնորին զառհաւատչեայն յօժարութեամբ յանձն առեալք ասասէն ցուցանել։ Ընդ հոգեկան բարեմասնութիւնս՝ զբաղձալին ամենեցուն՝ զմտաւորականն ասեմ և զբարոյականն կցորդելով յարդիւնս ածել խորհեցայք, լեալ յորդորիչ և քաջալերս աշխատասէր մտաց յայսպիսի շահաւէտ և ազգաշէն երկս, օձան և երախտաւոր համազգային ուսումնասիրաց ընթերցանելեաց և հնախոյզ քննասիրաց, սատարիչ եւ ձեռնտու դոյզն ինչ վաստակոցս, զոսյն իսկ՝ ժամանակագրական Պատմութիւնս սրբոյ քաղաքին Երուսաղէմի 'ի լոյս ընծայել։ Արդարեւ մեծի փառաց և արձան յաւերժական յիշատակի կանգնեցիք դարուց 'ի դարս վասն Ձեր և վասն հոգւոց 'ի Տէր հանգուցելոց Բարթողեան եւ Անշըգեան բարեսոհմիկ զարմին, որոց բազում անգամ զօրավիգ և օժանդակ լեալ են արդեանց մտաւոր վաստակաւորաց ոմանց՝ 'ի զարգացումն Հայ մանկտւոյն, յորոց յոլով տպագրութեամբ 'ի լոյս ընծայեալ են ասսի 'ի Սրբոյ Աթոռոյս։ Եւ քանզի